Խաղողագովք - 1

Աղջկեք, պար բռնեցեք,
Խաղողի գույնը գովեցեք,
Այ խաղող, կարմիր խաղող,
Սիպտակ ու սև, կանաչ խաղող:

Աղջկեք, պար բռնեցեք,
Խաղողի համը գովեցեք,
Այ խաղող, անուշ խաղող,
Մեղրից քաղցր, գինու խաղող:

Խաղողագովք - 2

Խաղող էս ինչ լավն ես,
Խաղողին գովելու համար ենք եկել,
Քաղցր, մեղցր, անուշ ես,
Խաղողին տանելու համար ենք եկել:

Խաղողին ճզմելու համար ենք եկել,
Խաղողից գինի սարքելու ենք եկել:

Խաղողագովք - 3

- Էկեք ճզմենք անուշ խաղող:
- Ինչո՞վ ճզմենք:

- Ձեռքով ճզմենք:
- Ձեռքով, ձեռքով, ձեռքով ճզմենք:

- Էկեք ճզմենք անուշ խաղող:
- Ինչո՞վ ճզմենք:
- Ոտքով ճզմենք:
- Ոտքով, ոտքով, ոտքով ճզմենք:

Խաղողագովք - 4

- Գովենք, գովենք, ո՞ւմ գովենք:
- Խաղողին գովենք:

Գովենք, գովենք, ո՞ւմ գովենք,
Ջա՛ն, խաղող, ջա՛ն, ջա՛ն,
Խաղողի համը գովենք,
Ջա՛ն, խաղող, ջա՛ն, ջա՛ն:

Խաղող լցնենք հնձանը,
Ջա՛ն, խաղող, ջա՛ն, ջա՛ն,
Ճզմենք, լցնենք տակառը (կարասը),
Ջա՛ն, խաղող, ջա՛ն, ջա՛ն:

Տակառ տանենք մառանը,
Ջա՛ն, խաղող, ջա՛ն, ջա՛ն,
Մաճառ խմենք աշնանը,

Ջա՛ն, խաղող, ջա՛ն, ջա՛ն:

Մաճառ թողնենք մառանը,
Ջա՛ն, խաղող, ջա՛ն, ջա՛ն,
Գինի խմենք ձմռանը,
Ջա՛ն, խաղող, ջա՛ն, ջա՛ն:

Խաղողագովք - 4

Իմ խաղողը խաս խաղող է,
Ջրի միջի թաս խաղող է,
Էսպես խաղող ո՞վ ունի,
Շորերով շապիկ ունի,
Մարգրտով հատիկ ունի,
Մեյդանը գինի ունի:

Խաղողախաղեր

- Ծափին, ծափին, ծափ նաներով,

Գինի ունեմ պուտուկներով,
Բաժակ չկա, ու թաս չկա,
Ինչո՞վ խմեմ:

- Մե՛ծ շերեփով:

✓ Հա, թռի, թռի, թռցնեմ,
Սև հավի միս կերցնեմ,

Կարմիր գինի խմցնեմ,
Հով ծառի տակ քնցնեմ:

Ինքնագովք

- Կլորիկ ու թմբլիկ եմ,

Պստլիկ ու ճստլիկ եմ,
Կարմիր, շողշող, քաղցրիկ եմ,
Աչուկներս սևուլիկ են,
Կա՞ ինձ նման սիրունիկը:

- Չկա՛, չկա՛, չկա՛: